



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015  
Էլ. փոստ [suren.galstyan@justice.am](mailto:suren.galstyan@justice.am)

№ /12.0.02/6836-2021

«22» մարտ 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Զայան,**

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի փետրվարի 22-ին ՀՀ արդարադատության նախարարություն ստացված թիվ Մ/9897-2021 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ արդարադատության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տրամադրած տեղեկությունների համաձայն՝ [REDACTED] 2021 թվականի հունվարի 30-ին հայտարարել է, որ կատարել է ինքնավնասում՝ կուլ է տվել գդալի պոչ:

2021 թվականի փետրվարի 1-ին [REDACTED] ենթարկվել է որովայնի օրգանների թվային ֆլուորոգրաֆիկ հետազոտության, որի արդյունքում վերջինիս ստամոքս-աղիքային տրակտում նկարագրվել է 10-11 սմ երկարության, գդալի պոչին նմանվող, մետաղյա մարմին: Այլ պաթոլոգիական փոփոխություններ չեն նկարագրվել:

2021 թվականի հունվարի 30-ից [REDACTED] որովայնի խոռոչում օտար մարմինների կապակցությամբ գտնվել է ՊՈԱԿ-ի՝ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում տեղակայված ստորաբաժանման բժշկական անձնակազմի հսկողության տակ, գանգատներ չի ներկայացրել:

2021 թվականի փետրվարի 2-ին [REDACTED] գանգատվել է քթի խոռոչի չորությունից, որի կապակցությամբ զննվել է քիթ-կոկորդ-ականջաբանի կողմից: Ախտորոշվել է «քրոնիկ ատրոֆիկ ռինիտ», տրվել են խորհուրդներ:

2021 թվականի փետրվարի 18-ին [REDACTED] ենթարկվել է որովայնի օրգանների կրկնակի թվային ֆյուրոզոգրաֆիկ հետազոտության, որի արդյունքում ստամոքս-աղիքային տրակտում օտար, ռենտգեն պոզիտիվ մարմիններ չեն հայտնաբերվել: Եզրակացություն՝ այն հեռացել է բնական ճանապարհով:

Միաժամանակ հայտնում եմ, որ [REDACTED] [REDACTED] մոտ ներկայումս ախտորոշված է «անձի օրգանական խանգարում, քրոնիկական հեպատիտ, քրոնիկական գաստրիտ, ռեֆլյուքս էզոֆագիտ, քրոնիկական կոլիտ, հետվիրահատական կալոմային հիվանդություն», ինչի կապակցությամբ վերջինս ստանում է համապատասխան բուժում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ,  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

 Invalid signature

X



Sosi Vardanyan

**ՍՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Կատարող՝ Ռուբինա Մխիթարյան  
ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության,  
քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի  
քաղաքականության մշակման վարչություն  
Հեռ.՝ (010) 594-081